



ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ - ՀԱՅԱՍՏԱՆ

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

2005թ. ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2006



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

Հեռախոսային հարցումը իրականացվել է Քաունթերփարթ Ինթերնեշնլ-ի (CPI) Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի (CASP) և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) օժանդակության շնորհիվ: Շարադրված տեսակետները պատկանում են հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ Ինթերնեշնլ-ի Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետի հետ:



Քաղաքացիական Շահերի
Պաշտպանության Աջակցության Ծրագիր
CIVIC ADVOCACY
SUPPORT PROGRAM - ARMENIA

© Տարածաշրջանային զարգացման կենտրոն/
Թրանսփարենսի Ինթերնեշնլ - Հայաստան

ՂՂ, Երևան 0010
Նալբանդյան փ. 5, սեն. 35, 38
Հեռախոս՝ (374 10) 585 578, 526 914
Ֆաքս՝ (374 10) 585 578
Էլ. հասցե՝ crd@transparency.am
Ինտերնետ կայք՝ www.transparency.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|----|
| ՀԵՌԱԽՈՍԱՍՅԻՆ ՀԱՐՑՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ | 2 |
| ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ | 3 |
| ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ. ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ | 3 |
| ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ | 11 |

Հեռախոսային հարցման նկարագիր

Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսփարենսի Ինթերնեշնլ - Հայաստան հասարակական կազմակերպությունը «Առավել արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականության խթանումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում 2005թ. օգոստոսի 1-ից 31-ը հեռախոսային հարցում է կատարել Հայաստանի ողջ տարածքում: Հարցումը նպատակ ուներ պարզելու ՀՀ կառավարության կողմից իրականացվող Հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի մասին Հայաստանի բնակիչների տեղեկացվածության մակարդակը:

Հեռախոսային հարցմանը մասնակցել է 1500 մարդ: Հարցումն արվել է Հայաստանի բոլոր քաղաքային համայնքներում, այդ թվում Երևանում: Հարցման ընտրանքը կատարվել է հետևյալ ձևով՝ Հայաստանում անցկացված վերջին մարդահամարի տվյալներից վերցվել են.

- Հայաստանի ամբողջ բնակչության թիվը,
- Հայաստանի բնակչության թիվն ըստ մարզերի՝ ներառյալ Երևանը,
- Հայաստանի բնակչության թիվն ըստ մարզերի քաղաքային համայնքների:

Հայաստանի ամբողջ բնակչության թիվը բաժանվել է ըստ մարզերի (ներառյալ Երևանը) բնակչության թվերի վրա՝ պարզելու համար յուրաքանչյուր մարզի բնակիչների թվի համամասնությունը և ըստ այդմ որոշվել է յուրաքանչյուր մարզին բաժին ընկնող հեռախոսազանգերի քանակը: Մարզի և նրա տարածքում գտնվող քաղաքային համայնքների բնակչության թվերի համամասնությամբ էլ որոշվել է յուրաքանչյուր քաղաքային համայնքին բաժին ընկնող զանգերի քանակը: Նույնը կատարվել է Երևանում՝ որպես քաղաքային համայնքներ դիտարկելով թաղերը: Յուրաքանչյուր համայնքում զանգերի քանակը որոշելուց հետո մարզպետարանների, քաղաքապետարանների և փոստային բաժանմունքների միջոցով ճշտվել են քաղաքային համարները:

Հեռախոսազանգի քայլը Երևանի համար ահմանվել է «.-10-10», մնացած քաղաքների համար՝ «-10»: Երևանի համար դա ուներ նման տեսք՝ պատահականորեն վերցված մեկնարկային «63-12-05» հեռախոսահամարին, օրինակ, հետևել է «63-22-15»-ը, այնուհետև «63-32-25»-ը և այդպես շարունակ, իսկ մարզերի դեպքում՝ «2-14-17»-ին հետևել է «2-14-27»-ը, այնուհետև՝ «2-14-37»-ը և այլն: Հավաքված համարի չպատասխանելու դեպքում հավաքվել է հաջորդ համարն ըստ նշված հերթականության:

Հարցման մասնակիցները պատասխանել են հետևյալ հարցերին.

1. Ձեր կարծիքով վերջին երեք տարում Հայաստանում կոռուպցիան աճե՞լ է, թե՞ նվազել:
2. Թվարկեք, խնդրեմ, երեք ամենակոռումպացված ոլորտները:
3. Որո՞նք են, Ձեր կարծիքով, կոռուպցիայի պատճառները:
4. Տեղյա՞կ եք, արդյոք, որ ՀՀ կառավարությունն իրականացնում է կոռուպցիայի դեմ պայքարի ծրագիր:
5. Եթե տեղյակ եք, ապա արդյունավե՞տ է, արդյոք, այդ պայքարը:

Ժողովրդագրական տվյալներ

Հարցման մասնակիցների 33,1%-ը եղել է տղամարդ, 66,9%-ը՝ կին: Հարցվածները հիմնականում «21-40» և «41-60» տարեկան էին (համապատասխանաբար 42,1% և 32,7%): «61-ից բարձր» և «մինչև 20» տարեկան են եղել հարցվածների համապատասխանաբար 15,9% և 9,3%-ը: Հարցվածների 38,2%-ն ուներ բարձրագույն կրթություն, 37,2%-ը՝ միջնակարգ, 23,9%-ը՝ միջնակարգ մասնագիտական և միայն 0,7%-ն ուներ գիտական աստիճան:


Հարցվածների 23,4%-ը եղել է գործազուրկ, 20,2%-ը՝ տնային տնտեսուհի, 16,3%-ը՝ մասնավոր բիզնեսի աշխատակից, 15,7%-ը՝ թոշակառու, 14,8%-ը՝ բյուջետային աշխատող, 6,4%-ը՝ ուսանող, 1,3%-ը՝ գործարար, 0,5%-ը՝ հասարակական կազմակերպությունների աշխատակից և 1,3%-ը՝ այլ զբաղմունք ունեցող: Հարցման մասնակիցների ժողովրդագրական տվյալներն ավելի մանրամասն ներկայացված են աղյուսակների և գրաֆիկների տեսքով:

Հարցման արդյունքներ. ամբողջական պատկեր

Հարց 1. Ձեր կարծիքով վերջին երեք տարում Հայաստանում կոռուպցիան աճել է, թե՞ նվազել:

Հարցվածների 62,9%-ը համարել է, որ վերջին երեք տարում Հայաստանում կոռուպցիան աճել է, 4,5%-ը՝ նվազել, իսկ 15,5%-ը պատասխանել է, որ կոռուպցիան մնացել է նույնը: Հարցվածների 17,1%-ը չի կարողացել կողմնորոշվել:

Գրաֆիկ 1



Հարց 2. Թվարկե՛ք, խնդրե՛մ, երեք ամենակոռումպացված ոլորտները:

Հարցման մասնակիցներին ներկայացվել է պատասխանների 31 տարբերակ պարունակող հարց և առաջարկվել է ընտրել դրանցից երեքը՝ նշելով կարևորության աստիճանը: Հարցվողների 13,1%-ը ամենակոռումպացված ոլորտ է համարել պետական կառավարման

մարմինները (այդ թվում նախարարությունները), 11,3%-ը կարծիք է հայտնել, որ Հայաստանում չկա ոչ կոռումպացված ոլորտ՝ բոլոր ոլորտները կոռումպացված են, հարցին չի կարողացել պատասխանել 29.9%-ը:

Որպես երկրորդ ամենակոռումպացված ոլորտ հարցվողները նորից նշել են պետական կառավարման մարմինները (այդ թվում նախարարությունները)՝ 5,3%, ոստիկանությունը՝ 5,0 %, իսկ 46,4%-ը հարցադրմանը չի կարողացել պատասխանել: Որպես երրորդ ամենակոռումպացված ոլորտ նշվել են դատարանները և ոստիկանությունը՝ 5,1-ական տոկոս: Հարցադրմանը չի կարողացել պատասխանել հարցվածների 57,6%-ը: Արդյունքներն ավելի մանրամասն ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

| Ամենակոռումպացված ոլորտները | | Պատասխան 1. | % | Պատասխան 2. | % | Պատասխան 3. | % |
|-----------------------------|---|-------------|------|-------------|------|-------------|------|
| 1 | Պատասխան չկա | 0 | 0.0 | 696 | 46.4 | 864 | 57.6 |
| 2 | Ամուսնության կամ ամուսնալուծության գրանցման (ՁԱԳՍ) մարմինները | 1 | 0.1 | 0 | 0.0 | 1 | 0.1 |
| 3 | Անտառտնտեսության համակարգը | 5 | 0.3 | 7 | 0.5 | 2 | 0.1 |
| 4 | Առողջապահության համակարգը | 117 | 7.8 | 73 | 4.9 | 28 | 1.9 |
| 5 | Բանակը | 46 | 3.1 | 34 | 2.3 | 38 | 2.5 |
| 6 | Բանկային համակարգը | 5 | 0.3 | 7 | 0.5 | 7 | 0.5 |
| 7 | Դատարանները | 86 | 5.7 | 71 | 4.7 | 77 | 5.1 |
| 8 | Դատախազությունը | 16 | 1.1 | 37 | 2.5 | 56 | 3.7 |
| 9 | Էներգաբաշխիչ համակարգը | 9 | 0.6 | 8 | 0.5 | 8 | 0.5 |
| 10 | Համատիրությունները | 0 | 0.0 | 2 | 0.1 | 3 | 0.2 |
| 11 | Կրթական համակարգը | 125 | 8.3 | 73 | 4.9 | 36 | 2.4 |
| 12 | Հարկային մարմինները | 33 | 2.2 | 35 | 2.3 | 24 | 1.6 |
| 13 | Մաքսային մարմինները | 5 | 0.3 | 16 | 1.1 | 10 | 0.7 |
| 14 | Պետավտոտեսչությունը | 10 | 0.7 | 21 | 1.4 | 12 | 0.8 |
| 15 | Ջրային տնտեսությունները | 7 | 0.5 | 12 | 0.8 | 5 | 0.3 |
| 16 | Ոստիկանությունը | 62 | 4.1 | 75 | 5.0 | 76 | 5.1 |
| 17 | Սոցիալական ապահովության համակարգը (սոցապ բաժինները) | 29 | 1.9 | 32 | 2.1 | 34 | 2.3 |
| 18 | Նախագահի աշխատակազմը | 6 | 0.4 | 8 | 0.5 | 5 | 0.3 |
| 19 | Պետական կառավարման մարմինները/ նախարարություններ | 196 | 13.1 | 80 | 5.3 | 61 | 4.1 |
| 20 | ՀՀ ԱԺ | 13 | 0.9 | 54 | 3.6 | 22 | 1.5 |

| | | | | | | | |
|----|--|-------------|------------|-------------|------------|-------------|------------|
| 21 | Տեղական ինքնակառավարման մարմինները | 45 | 3.0 | 61 | 4.1 | 39 | 2.6 |
| 22 | Ընտրությունները | 8 | 0.5 | 22 | 1.5 | 14 | 0.9 |
| 23 | Քաղաքաշինության/ ճարտարապետական թույլտվություն տվող մարմինները | 7 | 0.5 | 19 | 1.3 | 12 | 0.8 |
| 24 | Տրանսպորտը | 8 | 0.5 | 18 | 1.2 | 8 | |
| 25 | Պետռեգիստրը | 0 | 0.0 | 1 | 0.1 | 3 | 0.2 |
| 26 | Գործարարները (օլիգարխները) | 21 | 1.4 | 15 | 1.0 | 30 | 2.0 |
| 27 | Կապի համակարգը | 6 | 0.4 | 7 | 0.5 | 7 | 0.5 |
| 28 | Կադաստրը | 17 | 1.1 | 15 | 1.0 | 16 | 1.1 |
| 29 | ԴԿ-ները | 0 | 0.0 | 1 | 0.1 | 2 | 0.1 |
| 30 | Հայաստանում չկա ոչ կոռումպացված ոլորտ, բոլոր ոլորտները կոռումպացված են | 169 | 11.3 | 0 | 0.0 | 0 | 0.0 |
| 31 | Դժվարանում են պատասխանել | 448 | 29.9 | 0 | 0.0 | 0 | 0.0 |
| | ԸՆԴԱՄԵՆՆԸ | 1500 | 100 | 1500 | 100 | 1500 | 100 |

Պատասխանների երեք տարբերակների խմբավորման համաձայն հարցվողների 11,5%-ը որպես ամենակոռումպացված ոլորտ նշել է պետական կառավարման մարմինները, այդ թվում՝ նախարարությունները, 8,0-ական տոկոսը՝ դատարաններն ու կրթական համակարգը, 7,4%-ը՝ առողջապահական համակարգը, 7,2%-ը՝ ոստիկանությունը: Հարցվողների 5,7%-ի կարծիքով Հայաստանում չկա չկոռումպացված ոլորտ՝ բոլոր ոլորտները հավասարապես կոռումպացված են. մանրամասն տվյալները ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

| | Ամենակոռումպացված ոլորտները | Ընդամենը # | Ընդամենը % |
|----|---|------------|------------|
| 1 | Առողջապահական համակարգը | 218 | 7.4 |
| 2 | Բանակը | 118 | 4.0 |
| 3 | Դատարանները | 234 | 8.0 |
| 4 | Դատախազությունը | 109 | 3.7 |
| 5 | Կրթական համակարգը | 234 | 8.0 |
| 6 | Հարկային մարմինները | 92 | 3.1 |
| 7 | Ոստիկանությունը | 213 | 7.2 |
| 8 | Սոցիալական ապահովության համակարգը (սոցապ բաժինները) | 95 | 3.2 |
| 9 | Քաղաքապետարանները/ թաղապետարանները/ գյուղապետարանները | 145 | 4.9 |
| 10 | Դժվարանում են պատասխանել | 448 | 15.2 |

| | | | |
|----|--|--------------|------------|
| 11 | Պետական կառավարման մարմինները (նախարարություններ) | 337 | 11.5 |
| 12 | Հայաստանում չկա ոչ կոռումպացված ոլորտ, բոլոր ոլորտները կոռումպացված են | 169 | 5.7 |
| 13 | ՀՀ ԱԺ | 89 | 3.0 |
| 14 | Այլ | 439 | 15.0 |
| | ԸՆդամներ | 2940* | 100 |

* ընդհանուր պատասխանների մեջ հանված է «պատասխան չկա» տարբերակը

Հարց 3. Որո՞նք են, Ձեր կարծիքով, կոռուպցիայի պատճառները:

Որպես կոռուպցիայի առաջին պատճառ հարցման մասնակիցները նշել են հետևյալ գործոնները՝ անբարենպաստ սոցիալական պայմաններ (22,1%), անիշխանություն (9,5%), պետական պաշտոնյաների ազահություն ու ընչաքաղցություն (5,5%), պետության ոչ ճիշտ կառավարում և իշխանավորների անպատժելիություն (4,7-ական տոկոս), օրինականություն և ազնվություն ապահովող ամբողջական պետական համակարգի կոռումպացվածություն (4,5%), փոխադարձ լավություն անելու ազգային ավանդույթ (4,3%), վերահսկողական մեխանիզմների և պատժամիջոցների կիրարկման բացակայություն (4,1%):

Որպես կոռուպցիայի երկրորդ պատճառ հարցվողները նշել են՝ համատարած գործազրկություն (8,1%), իշխանավորների անպատժելիություն (8,0%), անբարենպաստ սոցիալական պայմաններ (4,6%): Որպես կոռուպցիայի երրորդ պատճառ հարցվողները նույն համամասնությամբ (1,1-ական տոկոս) նշել են չորս գործոն՝ իշխանավորների անպատժելիություն, քաղաքացիների հանդուրժողականություն, պետական պաշտոնյաների ազահություն ու ընչաքաղցություն, օրինականություն և ազնվություն ապահովող պետական համակարգի կոռումպացվածություն: Հարցվողների 15,5%-ը չի կարողացել նշել կոռուպցիայի գոնե մեկ պատճառ, 54,8%-ը նշել է երկու պատճառ և միայն 11,6%-ն է նշել կոռուպցիայի երեք պատճառ: Արդյունքներն ավելի մանրամասն ներկայացված են Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

| | Կոռուպցիայի պատճառները | 1 | % | 2 | % | 3 | % |
|---|--|----|-----|-----|------|------|------|
| 1 | Պատասխան չկա | 0 | 0.0 | 678 | 45.2 | 1326 | 88.4 |
| 2 | Քաղաքական կամքի բացակայություն որոշում ընդունելիս | 2 | 0.1 | 0 | 0.0 | 1 | 0.1 |
| 3 | Որոշումների կայացման մասնակցայնության բացակայություն | 1 | 0.1 | 1 | 0.1 | 0 | 0.0 |
| 4 | Պետության կողմից այլ ոլորտների գործունեությանը միջամտելու լայն հնարավորություն | 2 | 0.1 | 4 | 0.3 | 3 | 0.2 |
| 5 | Իշխանավորների անպատժելիություն | 70 | 4.7 | 120 | 8.0 | 16 | 1.1 |

| | | | | | | | |
|----|--|-----|------|-----|-----|----|-----|
| 6 | Պետական պաշտոնյաների ցածր վարձատրություն և բարոյական արժեքների անկում | 18 | 1.2 | 21 | 1.4 | 6 | 0.4 |
| 7 | Քաղաքական և տնտեսական շահերի միահյուսվածություն | 0 | 0.0 | 0 | 0.0 | 1 | 0.1 |
| 8 | Ջինվորական վերնախավի արտոնություններ | 5 | 0.3 | 2 | 0.1 | 2 | 0.1 |
| 9 | Օրենքների բարդություն, անկատարություն և դրանց կիրարկման անբավարար արդյունավետություն | 42 | 2.8 | 26 | 1.7 | 1 | 0.1 |
| 10 | Դատական համակարգի կախվածություն գործադիրից | 1 | 0.1 | 2 | 0.1 | 0 | 0.0 |
| 11 | Անվստահություն պետության և հանդուրժողականություն կոռուպցիայի նկատմամբ | 15 | 1.0 | 5 | 0.3 | 1 | 0.1 |
| 12 | Օրինականություն և ազնվություն ապահովող պետական համակարգի կոռումպացվածություն | 67 | 4.5 | 40 | 2.7 | 16 | 1.1 |
| 13 | Ազատ և մրցակցային շուկայի բացակայություն | 5 | 0.3 | 1 | 0.1 | 0 | 0.0 |
| 14 | Փոխադարձ լավություն անելու ազգային ավանդույթ | 65 | 4.3 | 33 | 2.2 | 4 | 0.3 |
| 15 | Բարեկամական կապերի օգտագործման չարաշահում | 7 | 0.5 | 7 | 0.5 | 1 | 0.1 |
| 16 | Իր իրավունքների մասին հասարակության իրազեկության պակաս | 36 | 2.4 | 33 | 2.2 | 9 | 0.6 |
| 17 | ԶԼՄ-ների ոչ հետևողականությունը կոռուպցիոն զարգացումները լուսաբանելու առումով | 0 | 0.0 | 1 | 0.1 | 0 | 0.0 |
| 18 | Տեղեկատվության մատչելիության սահմանափակում | 1 | 0.1 | 1 | 0.1 | 0 | 0.0 |
| 19 | Պետական հատվածում թափանցիկության և հաշվետվության պակաս | 0 | 0.0 | 1 | 0.1 | 0 | 0.0 |
| 20 | Վերահսկողական մեխանիզմների և պատժամիջոցների կիրարկման բացակայություն | 62 | 4.1 | 57 | 3.8 | 9 | 0.6 |
| 21 | Անբարենպաստ սոցիալ-տրնտեսական պայմանները | 332 | 22.1 | 69 | 4.6 | 10 | 0.7 |
| 22 | Պետական պաշտոնյաների ազահություն և ընչաքաղցություն | 83 | 5.5 | 49 | 3.3 | 17 | 1.1 |
| 23 | Պետության ոչ ճիշտ կառավարում | 70 | 4.7 | 19 | 1.3 | 5 | 0.3 |
| 24 | Համատարած գործազրկություն | 50 | 3.3 | 122 | 8.1 | 13 | 0.9 |
| 25 | Պետական պաշտոնյաների արհամարական վերաբերմունք | 4 | 0.3 | 5 | 0.3 | 2 | 0.1 |
| 26 | Ամեն զնով իր ուզածին հասնելու ձգտում | 18 | 1.2 | 21 | 1.4 | 5 | 0.3 |
| 27 | Անիշխանություն | 142 | 9.5 | 50 | 3.3 | 13 | 0.9 |
| 28 | Պետության ղեկավարների անտարբերություն | 9 | 0.6 | 7 | 0.5 | 1 | 0.1 |

| | | | | | | | |
|----|--|-------------|------------|-------------|------------|-------------|------------|
| 29 | Պետական մարմինների անաշխատունակություն | 19 | 1.3 | 6 | 0.4 | 1 | 0.1 |
| 30 | Քաղաքացիների հանդուրժողականություն | 38 | 2.5 | 55 | 3.7 | 17 | 1.1 |
| 31 | Համապատասխան օրենքների բացակայություն | 50 | 3.3 | 39 | 2.6 | 12 | 0.8 |
| 32 | Ընտարական համակարգ և ընտրություններ | 1 | 0.1 | 2 | 0.1 | 2 | 0.1 |
| 33 | Պետական պաշտոնյաների ցածր աշխատավարձ | 53 | 3.5 | 23 | 1.5 | 6 | 0.4 |
| 34 | Դժվարանում են պատասխանել | 232 | 15.5 | 0 | 0.0 | 0 | 0.0 |
| | Ընդամենը | 1500 | 100 | 1500 | 100 | 1500 | 100 |

Երրորդ հարցին տրված երեք պատասխանների խմբավորման համաձայն հարցվողների 16,5%-ը որպես կոռուպցիայի պատճառ է նշել անբարենպաստ սոցիալ-տնտեսական պայմանները, 8,2-ական տոկոսը՝ անիշխանությունը և իշխանավորների անպատժելիությունը, 7,4%-ը՝ համատարած գործազրկությունը, 5,9%-ը՝ պետական պաշտոնյաների ազահությունն ու ընչաքաղցությունը, 5,1%-ը՝ վերահսկողական մեխանիզմների և պատժամիջոցների կիրարկման բացակայությունը: Ավելի մանրամասն արդյունքները ներկայացված են Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4


| | Կոռուպցիայի պատճառները | Ընդամենը # | Ընդամենը % |
|----|---|------------|------------|
| 1 | Իշխանավորների անպատժելիությունը | 206 | 8.2 |
| 2 | Օրինականություն և ազնվություն ապահովող պետական համակարգի կոռումպացվածությունը | 123 | 4.9 |
| 3 | Փոխադարձ լավություն անելու ազգային ավանդույթը | 102 | 4.0 |
| 4 | Իր իրավունքների մասին հասարակության իրազեկության պակասը | 78 | 3.1 |
| 5 | Վերահսկողական մեխանիզմների և պատժամիջոցների կիրարկման բացակայությունը | 128 | 5.1 |
| 6 | Անբարենպաստ սոցիալ-տնտեսական պայմանները | 411 | 16.5 |
| 7 | Դժվարանում են պատասխանել | 232 | 9.3 |
| 8 | Պետության ոչ ճիշտ կառավարումը | 94 | 3.7 |
| 9 | Համատարած գործազրկությունը | 185 | 7.4 |
| 10 | Անիշխանությունը | 205 | 8.2 |
| 11 | Քաղաքացիների հանդուրժողականությունը | 110 | 4.4 |

| | | | |
|----|---|-------------|------------|
| 12 | Համապատասխան օրենքների բացակայությունը | 101 | 4.0 |
| 13 | Պետական պաշտոնյաների ցածր աշխատավարձը | 82 | 3.3 |
| 14 | Պետական պաշտոնյաների ազախությունն ու ընչաքաղցությունը | 149 | 5.9 |
| 15 | Այլ | 290 | 12.0 |
| | Ընդամենը | 2496 | 100 |

Չարք 4. Տեղյա՞կ եք, արդյոք, որ ՀՀ կառավարությունն իրականացնում է կոռուպցիայի դեմ պայքարի ծրագիր:

Հարցվածների գերակշռող մեծամասնությունը տեղյակ է ՀՀ կառավարության կողմից կոռուպցիայի դեմ «ծավալած պայքարի» վերաբերյալ: Սակայն հաշվի առնելով այն փաստը, որ հեռախոսային հարցումն անցկացվել է միայն քաղաքներում, ապա 34 տոկոս չտեղկացվածների «փոքրամասնությունը» դժվար է փոքր թիվ համարել, ինչը խոսում է ոչ արդյունավետ իրազեկման մասին:


Գրաֆիկ 2



Չարք 5. Եթե տեղյակ եք, ապա արդյունավե՞տ է, արդյոք, այդ պայքարը:


Կոռուպցիայի դեմ պայքարի կառավարության ծրագրի իրականացումը արդյունավետ է համարել հարցվածների միայն 5,0%-ը, 49,4%-ը համարել է ոչ արդյունավետ, 11,7%-ը չի կողմնորոշվել:

Գրաֆիկ 4




Հարց 6. Հարցվողի կրթությունը

Գրաֆիկ 5




Հարց 7. Հարցվողի զբաղմունքը

Գրաֆիկ 6




Ֆարց 8. Հարցվողի տարիքը

Գրաֆիկ 7



Ֆարց 9. Հարցվողի սեռը

Գրաֆիկ 8



Համեմատական վերլուծություն

Հարցվողներից Գյումրիի բնակիչներն են ամենից ավելի ենթադրում, որ կոռուպցիան Հայաստանում աճել է (76,3%): «Ձեր կարծիքով՝ վերջին երեք տարում Հայաստանում կոռուպցիան աճել է, թե՞ նվազել» 1-ին հարցի պատասխանները ՀՀ ամբողջ տարածքում, Գյումրիում, Վանաձորում և Երևանում բաշխվել են հետևյալ կերպ.

Աղյուսակ 5

| | | ՀՀ տարածքում | Գյումրիում | Վանաձորում | Երևանում |
|---|--------------------------|--------------|------------|------------|------------|
| 1 | Այո | 62,9 | 76,3 | 61,9 | 67,4 |
| 2 | Ոչ | 4,5 | 1,7 | 5,7 | 1,9 |
| 3 | Դժվարանում են պատասխանել | 17,1 | 14,0 | 17,1 | 14,0 |
| 4 | Նույնն է մնացել | 15,5 | 7,9 | 15,2 | 16,7 |
| | Ընդամենը | 100 | 100 | 100 | 100 |

«Թվարկե՛ք, խնդրեմ, երեք ամենակոռումպացված ոլորտները» 2-րդ հարցի պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ.

ՀՀ տարածքում՝

- Պետական կառավարման մարմիններ՝ 11,5%,
- Դատարաններ և կրթական համակարգ՝ 8,0-ական տոկոս,

- Առողջապահություն՝ 7,4%:
- Գյուճարիում՝
- Պետական կառավարման մարմիններ՝ 14,2%,
 - Քաղաքապետարան՝ 11,8%,
 - Հայաստանում չկա ոչ կոռուկացված ոլորտ՝ բոլոր ոլորտներն էլ կոռուկացված են՝ 9,9%:
- Վանաձորում՝
- Դատարաններ՝ 10,5%,
 - Պետական կառավարման մարմիններ՝ 10,0%,
 - Կրթական համակարգ՝ 7,5%:
- Երևանում՝
- Պետական կառավարման մարմիններ՝ 11,9%,
 - Դատարաններ՝ 9,1%,
 - Կրթական համակարգ՝ 8,8%:

Այսպիսով, ի տարբերություն Երևանի, Վանաձորի և ՀՀ մնացած քաղաքների, Գյուճարիում բավական բարձր տոկոս են կազմում նրանք, ովքեր մատնանշում են քաղաքապետարանի կոռուկացվածությունը, իսկ բոլոր երեք տարբերակներում հարցվողներն առաջին եռյակում նշել են պետական կառավարման համակարգը:

Հարցվողները, որպես կոռուկացիայի պատճառներ (3-րդ հարց), համարել են հիմնականում անբարենպաստ սոցիալական պայմանները, իշխանավորների անպատժելիությունը և անիշխանությունը: Երևանում հարցվողներն առաջին եռյակի մեջ նշել են նաև պետական պաշտոնյաների ազահությունն ու ընչաքաղցությունը: Երրորդ հարցի պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ.

- ՀՀ ողջ տարածքում՝
- Անբարենպաստ սոցիալական պայմաններ՝ 16,5%,
 - Իշխանավորների անպատժելիություն և անիշխանություն՝ 8,2-ական տոկոս,
 - Համատարած գործազրկություն՝ 7,4%:
- Գյուճարիում՝
- Անբարենպաստ սոցիալական պայմաններ՝ 18,3%,
 - Անիշխանություն՝ 15,6%,
 - Համատարած գործազրկություն՝ 11,8%:
- Վանաձորում՝
- Անբարենպաստ սոցիալական պայմաններ՝ 16,9%,
 - Անիշխանություն՝ 7,9%,
 - Համատարած գործազրկություն՝ 7,9%:
- Երևանում՝
- Իշխանավորների անպատժելիություն՝ 10,3%,
 - Անբարենպաստ սոցիալական պայմաններ՝ 13,9%,
 - Պետական պաշտոնյաների ազահությունն ու ընչաքաղցությունը՝ 7,6%:

4-րդ հարցը բնակչության տեղեկացվածությունն էր կառավարության կողմից իրականացվող կոռուկացիայի դեմ պայքարի ծրագրին: Ինչպես երևում է, հակակոռուկացիոն ծրագրի վերաբերյալ ամենամեծ տեղեկացվածություն

ունեն Կանաձորի և Երևանի բնակիչները, համապատասխանաբար, 73,3% և 72,5%:

Աղյուսակ 6

| | | ՀՀ տարածքում | Գյումրիում | Վանաձորում | Երևանում |
|---|-----------------|--------------|------------|------------|----------|
| 1 | Այո (տեղյակ եմ) | 66,1 | 59,6 | 73,3 | 72,5 |
| 2 | Ոչ (տեղյակ չեմ) | 33,9 | 40,4 | 26,7 | 27,5 |

Այն հարցին, թե որքանով արդյունավետ է իրականացվում կառավարության կողմից այդ պայքարը, հարցվողները տվել են հետևյալ պատասխանները.

Աղյուսակ 7

| | | ՀՀ տարածքում | Գյումրիում | Վանաձորում | Երևանում |
|---|--------------------------|--------------|------------|------------|------------|
| 1 | Այո (արդյունավետ է) | 5,0 | 0,9 | 7,6 | 3,5 |
| 2 | Ոչ (արդյունավետ չէ) | 49,4 | 50,0 | 53,3 | 58,9 |
| 3 | Դժվարանում եմ պատասխանել | 11,7 | 8,8 | 12,4 | 10,1 |
| 4 | Պատասխան չկա | 33,9 | 40,4 | 26,7 | 27,5 |
| | Ընդամենը | 100 | 100 | 100 | 100 |

ժողովրդագրական տվյալներ

Հարցվողների կրթությունը

Աղյուսակ 8

| | | ՀՀ տարածքում | Գյումրիում | Վանաձորում | Երևանում |
|---|-------------------------------|--------------|------------|------------|------------|
| 1 | Միջնակարգ | 37,2 | 32,5 | 36,2 | 26,2 |
| 2 | Միջնակարգ մասնագիտական | 23,9 | 20,2 | 21,0 | 21,1 |
| 3 | Բարձրագույն | 38,2 | 47,4 | 41,9 | 51,4 |
| 4 | Գիտական աստիճանի առկայություն | 0,7 | 0,0 | 1,0 | 1,2 |
| | Ընդամենը | 100 | 100 | 100 | 100 |

Հարցվողների զբաղմունքը

Աղյուսակ 9

| | | ՀՀ տարածքում | Գյումրիում | Վանաձորում | Երևանում |
|---|----------------------------------|--------------|------------|------------|----------|
| 1 | Բյուջետային աշխատող | 14,8 | 9,6 | 15,2 | 16,9 |
| 2 | Գործարար | 1,3 | 0,9 | 1,9 | 0,6 |
| 3 | Մասնավոր բիզնեսի աշխատակից | 16,3 | 11,4 | 21,9 | 16,1 |
| 4 | Հասարակական կառույցի աշխատակակից | 0,5 | 2,6 | 1,0 | 0,4 |
| 5 | Ուսանող | 6,4 | 3,5 | 7,6 | 7,9 |
| 6 | Թոշակառու | 15,4 | 18,4 | 21,9 | 16,5 |

| | | | | | |
|---|------------------|------------|------------|------------|------------|
| 7 | Գործազուրկ | 23,4 | 28,9 | 17,1 | 22,9 |
| 8 | Տնային տնտեսուհի | 20,2 | 22,8 | 12,4 | 18,0 |
| 9 | Այլ | 1,3 | 1,8 | 1,0 | 0,6 |
| | Ընդամենը | 100 | 100 | 100 | 100 |

Հարցվողների մեջ բյուջետային աշխատողները ամենից քիչ եղել են Գյուլերիում՝ 9,6% և ամենից շատ Երևանում՝ 16,9%, գործարարները և մասնավոր բիզնեսի աշխատակիցները համեմատաբար ավելի շատ են եղել Վանաձորում՝ համապատասխանաբար 1,9% և 21,9%, ամենից շատ հասարակական կառույցի աշխատակիցներ հարցվել են Գյուլերիում՝ 2,6% և ամենից քիչ Երևանում՝ 0,4%: Հարցվողների մեջ ուսանողները ամենից շատ եղել են Երևանում՝ 7,9% և ամենից քիչ Գյուլերիում՝ 3,5%: Թոշակառուների թիվը ամենից ավելի եղել է Վանաձորում՝ 21,9%: Գործազուրկների և տնային տնտեսուհիների թիվը ամենից շատ եղել է Գյուլերիում՝ համապատասխանաբար 28,9% և 22,8%, և ամենից քիչը Վանաձորում՝ 17,1% և 12,4%:

Հարցվողների տարիքը

Աղյուսակ 10

| | | | | | |
|---|-----------------|--------------|-------------|------------|------------|
| | | ՀՀ տարածքում | Գյուլերիում | Վանաձորում | Երևանում |
| 1 | Մինչև 20 | 9,3 | 7,0 | 9,5 | 10,1 |
| 2 | 21-40 | 42,1 | 41,2 | 40,0 | 39,0 |
| 3 | 41-60 | 32,7 | 32,5 | 27,6 | 32,9 |
| 4 | 61- բարձր | 15,9 | 19,3 | 22,9 | 18,0 |
| | Ընդամենը | 100 | 100 | 100 | 100 |

Մինչև 20 տարեկանների մասնակցությունը ամենաբարձրը եղել է Երևանում՝ 10,1% և ամենացածրը՝ Գյուլերիում՝ 7,0%: 21-40 տարեկանների մասնակցությունը բոլոր քաղաքներում գրեթե հավասար է: 41-60 տարեկանները ամենից քիչ մասնակցել են Վանաձորում՝ 27,6% : 61-ից բարձր մասնակիցների տեսակակրար կշիռը ամենից բարձր եղել է Վանաձորում՝ 22,9% և ամենից ցածր Երևանում՝ 18,0%:

Հարցվողների սեռը

Աղյուսակ 11

| | | | | | |
|---|-----------------|--------------|-------------|------------|------------|
| | | ՀՀ տարածքում | Գյուլերիում | Վանաձորում | Երևանում |
| 1 | Արական | 31,1 | 40,4 | 28,6 | 36,2 |
| 2 | Իգական | 66,9 | 59,6 | 71,4 | 63,8 |
| | Ընդամենը | 100 | 100 | 100 | 100 |

Վանաձորում հարցմանը մասնակցած տղամարդկանց թիվը կազմել է 28,6%, իսկ Գյուլերիում, ի տարբերություն Վանաձորի, հարցմանը մասնակցած տղամարդկանց թիվն ավելի մեծ է եղել և կազմել է 40,4%: